

# ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

2011-2013թ.թ.

«ՀայՈւուզագարդ» ՓԲԸ

զազի համալիրի վերականգնման և զարգացման

# ԲՈՎԱՆԴԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

3

### Բաժին 1. Գաղափոխադրման համակարգ

5

1.1. Ներդրումային ծրագրով նախատեսվող միջոցառումներ	5
1.2. Ներդրումային ծրագրով նախատեսվող ներդրումներ	5
1.2.1 Մայրուղային գաղափարների կապիտալ վերանորոգում, փոխարինում և վերատեղադրում	6
1.2.2 Գաղաքաշխիչ կայանների և այլ ինժեներական կառույցների շինարարություն և վերակառուցում	12
1.2.3 Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ	14
1.2.4 Գծային փականների տեղադրում և վերազինում	14
1.2.5 Էներգամատակարարման համակարգի վերականգնում	15
1.2.6 ԷջՊ կայանների տեղադրում և կապիտալ վերանորոգում	16
1.2.7 Բնական գազի հաշվառման համակարգի արդիականացում	17
1.2.8 Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում	17
1.2.9 Կապի համակարգի արդիականացում	20
1.2.10 Արովյանի ԳՄՊԿ-ի ընդլայնում, վերակառուցում և արդիականացում	21

### Բաժին 2. Գաղաքաշխման համակարգ

24

2.1. Ներդրումային ծրագրով նախատեսվող միջոցառումներ	24
2.2. Ներդրումային ծրագրով նախատեսվող ներդրումներ	25
2.2.1 Գաղաքաշխիչ ցանցի շինարարություն (ընդլայնում)	25
2.2.2 Բնական գազի կենցաղային հաշվիների տեղադրում	25
2.2.3 Գաղաքաշխման համակարգի վերականգնում, փոխարինում և վերատեղադրում	27
2.2.4 Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ	29
2.2.5 Հաշվառման համակարգի արդիականացում	30
2.2.6 Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում	31
2.2.7 ԷջՊ կայանների տեղադրում և կապիտալ վերանորոգում	33
2.2.8 Էներգամատակարարման համակարգի վերականգնում և արդիականացում	33
2.2.9 Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	35
2.2.10 Շենքերի, շինությունների կառուցում, ընդլայնում և ձեռքբերում	35
2.2.11 Կարգավարական, վրարա-վերականգնողական ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության օբյեկտների համար սարքավորումների ձեռքբերում	36

### Բաժին 3. 2011-2013 թթ. ամփոփ ներդրումներ

38

### Բաժին 4. 2011-2013 թթ. ներդրումների դասակարգում

41

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Սույն «Ներդրումային ծրագիրը» (այսուհետև Ծրագիր) կազմված է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի, 1 կետի, բ), ը) ենթակետերի և «Հայմուսգազարդ» ՓԲԸ թիվ 0109 լիցենզիայի 5.13 կետի և թիվ 0111 լիցենզիայի 5.12 կետի պայմանների համաձայն:**

Ներդրումային ծրագրի նպատակն է 2011-2013թ. ընթացքում «Հայմուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում ներդրումների ներգրավման ճանապարհով անխափան, հուսալի և անվտանգ գազամատակարարման ապահովումը:

«Հայմուսգազարդ» ՓԲԸ ներդրումային ծրագիրը կազմված է «Տրանսգազ» ՍՊԸ-ի ու գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղերի (ԳԳՄ) կողմից ստացված գազամատակարարման համակարգի պահպանմանը, համակարգի հուսալիության բարձրացմանը և անվտանգ շահագործմանը ուղղված լոկալ ծրագրերի հիման վրա, որոնցում ներառված են ներդրումներ պահանջող օբյեկտների և աշխատանքների անվանացանկը՝ իրենց ծավալագումարային ցուցանիշներով ըստ տարիների և սպասվող արդյունքների:

«Հայմուսգազարդ» ՓԲԸ-ի 2011-2013թ-ի Ներդրումային ծրագրի հիմնական նպատակներից է հանդիսանում ապահովել Ընկերության գործունեության շահութաբերության մակարդակը և ֆինանսական կայունությունը:

Ընկերության կողմից ներկայացված 2011-2013թ Ներդրումային Ծրագիրը մշակվել է ճգնաժամային և հատկապես ետճգնաժամային երևոյթների շարունակության, ինչպես նաև տնտեսությունում նեզատիկ միտումների իհայտ գալու պայմաններում: Այդ երևոյթների բացասական ազդեցությունը էներգետիկ ոլորտի և խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական ծավալների վրա իվերջու հանգեցրել է բնական գազի սպառման ծավալների կտրուկ նվազեցմանը: Ներդրումային Ծրագիրը մշակվել է հաշվի առնելով վերոհիշյալ պայմանների ազդեցությունը գազի համակարգի և, հետևաբար, Ընկերության ֆինանսական ցուցանիշների վրա:

Ելնելով նախատեսված ներդրումների նպատակայնությունից և բովանդակությունից, կատարվել է Ծրագրում ընդգրկված ներդրումների դասակարգում ըստ հետևյալ երեք կարևոր ուղղվածությունների (հոդվածների):

1. Ներդրումներ, որոնք ուղղված են համակարգի պահպանմանը
2. Ներդրումներ, որոնք ուղղված են համակարգի բարելավմանը և արդիականացմանը
3. Ներդրումներ, որոնք ուղղված են համակարգի զարգացմանը և ընդլայնմանը:

## ԲԱԺԻՆ 1

Գազափոխադրման համակարգ

## Բաժին 1. Գաղափոխադրման համակարգ (ԳՓՀ)

### 1.1. Ներդրումային ծրագրով նախատեսվող միջոցառումները

1. Մայրուղային գաղատարների կապիտալ վերանորոգում, փոխարինում և վերատեղադրում:
2. Գաղաքաշխիչ կայանների և այլ ինժեներական կառույցների շինարարություն և վերակառուցում:
3. Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ
4. Գծային փականների տեղադրում և արդիականացում:
5. Էներգամատակարարման համակարգի վերականգնում:
6. Էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների տեղադրում և կապիտալ վերանորոգում:
7. Բնական գազի հաշվառման համակարգի արդիականացում:
8. Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում:
9. Տրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռք բերում:
10. Կապի համակարգի արդիականացում:
11. Աբովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնում, վերակառուցում և արդիականացում:

### 1.2. Ներդրումային ծրագրով նախատեսվող ներդրումները

**Ս**ույն ենթաբաժնում ներկայացվում են 2011-2013թթ. ընթացքում նախատեսվող ներդրումները գաղափոխադրման համակարգում: Միջոցառումներում ընդգրկված աշխատանքների անվանացանկը և ծավալագումարային ցուցանիշները մշակելիս հիմք են ընդունվել նախագծանախահաշվային փաստաթղթերը, հետազոտման և ախտորոշման աշխատանքների արդյունքների հիման վրա կազմված բերության ակտերը, նմանատիպ օբյեկտների արժեքի հիման վրա նոր գնահատականները, ինչպես նաև ԳՍՊԿ-ի համալիր վերակառուցման ծրագիրը:

2011-2013թթ-ին կատարվելիք աշխատանքների ծավալագումարային ամփոփ տեսքը ըստ ենթաբաժինների ներկայացված է աղյուսակ 1-ում:

## Աղյուսակ 1

## Գազափոխադրման համակարգում նախատեսվող ներդրումները

№	Միջոցառումների աճվանումը	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)		
		2011թ	2012թ	2013թ
1.1	Մայրուղային գազատարների կապիտալ վերանորոգում, փոխարինում և վերատեղադրում	1041.7	570.9	675.1
1.2	Գազաբաշխիչ կայանների և այլ ինժեներական կառույցների շինարարություն և վերակառուցում	1089.3	314.3	251.8
1.3	Միջոցառումներ՝ կապված Աևանա լճի մակարդակի բարձրացման հետ	308.3		
1.4	Գծային փականների տեղադրում և արդիականացում	233.3	116.7	116.7
1.5	Էներգամատակարարման համակարգի վերականգնում	8.5	7.5	6.5
1.6	Էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների տեղադրում և կապիտալ վերանորոգում	64.0	32.0	
1.7	Բնական գազի հաշվառման համակարգի արդիականացում	21.1	53.6	50.6
1.8	Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում	21.4	92.4	85.0
1.9	Տրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	0.0	0.0	0.0
1.10	Կապի համակարգի արդիականացում	35.0	35.0	35.0
1.11	Արովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնում, վերակառուցում և արդիականացում	519.6	341.0	367.0
		Ընդամենը՝	3342.2	1563.4
				1587.7

*Ստորև բերվում են ԳՓՀ-ում 2011-2013թթ-ին նախատեսվող աշխատանքների ծավալագումարային ցուցանիշները և 2011 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների մանրամասն նկարագրությունը և անհրաժեշտության հիմնավորումը:*

#### **1.2.1. Մայրուղային գազատարների կապիտալ վերանորոգում, փոխարինում և վերատեղադրում:**

**Ըստ ազգային գազատարների կապիտալ վերանորոգում, փոխարինում և վերատեղադրում:** Այս գործում ներառված է աշխատանքների մայրուղային գազատարների օբյեկտներում տեղի ունեցած խափանումների վերլուծության ու ախտորոշիչ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակվել են գազափոխադրման համակարգում կատարվելիք աշխատանքների և միջոցառումների նախագծանախահաշվային փաստաթղթերը: Ծրագրում ներառված են ԳՓՀ գծային հատվածի նորմալ շահագործման

պահանջների ապահովման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը՝ շահագործման մեջ գտնվող գազատարների կապիտալ վերանորոգում, վերատեղադրում և այլն:

Ծրագրում, տվյալ ենթակետով, ընդգրկված են հետևյալ միջոցառումները.

- **Երևան - Արմավիր Dy500մմ մայրուղային գազատարի կապիտալ վերանորոգում, վերատեղադրում և փոխարինում:**

Արմավիրի մարզ գազամատակարարումը կատարվում է Երևան-Արմավիր Dy500մմ գազատարով, որը շահագործման է հանձնվել 1967թ-ին: Գազատարի 22կմ երկարությամբ հատվածը (ԿՄ8 ։ ԿՄ30) անցնում է ճահճուտներով (ջրային տարածքներով), ազրեսիլ գրունտների միջավայրով և վարելահողերի տարածքներով: Գազատարի երկարատև և էլեկտրաքիմիական պաշտպանության բացակայության պայմաններում շահագործման արդյունքում պարբերաբար ի հայտ են եկել մի շարք թերություններ: Առ այսօր կատարվել են փոխարինման և կապիտալ վերանորոգման աշխատանքներ գազատարի 11 կիլոմետր ընդհանուր երկարությամբ հատվածի համար: 2011թ.-ին նախատեսվում է իրականացնել գազատարի 1,5 կմ երկարությամբ հատվածի կապիտալ վերանորոգում:

- **Իլիշևակ - Երևան Dy700մմ և Երևան-Արարատ Dy350մմ գազատարների միջակցման գազատարի Dy500մմ վերականգնում և կապիտալ վերանորոգում:**

Միջակցման գազատարը 4,26կմ ընդհանուր երկարությամբ կառուցվել է շատ կարճ ժամանակահատվածում, շինարարության տեխնոլոգիայի խախտումներով և հանձնվել է շահագործման 1987թ-ին: Միջակցման գազատարի 1,5կմ երկարությամբ հատվածի վերականգնման և կապիտալ վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել Արարատի ցեմենտի գործարանի անխափան և հուսալի գազամատակարարման, ինչպես նաև Երևան-Արարատ գազատարով հակադարձ հոսքերի ապահովման նպատակով:

- **Երևանի ԳԲԿ-2-ի Dy700մմ կողմնատար գազատարի վրա հակասողանքային միջոցառումներ և վերատեղադրում սողանքի տարածքից դուրս:**

8,7 կմ երկարությամբ և Dy700մմ տրամագծով կողմնատար գազատարը, որը կառուցվել է 1973թ-ին, ի սկզբանե անցնում էր բարդ և վտանգավոր սողանքային երևույթներով հագեցած տեղանքով: ԿՄ4-ում գազատարը անցնում է բլուրի ստորոտով և վերջին ժամանակներում տեղած հորդառատ անձրևների պատճառով կտրուկ աճել է սողանքային երևույթների ակտիվությունը, որի հետևանքով բլուրը բաժանվել է երկու մասի՝ առաջացնելով մոտ 6 մետր խորությամբ ճեղք: Համապատասխան մասնագետների եզրակացության համաձայն գազատարի 1,2կմ երկարությամբ հատվածը ենթակա է վերատեղադրման, որի աշխատանքները և ընդգրկված են գազափոխադրման համակարգի վերականգնման 2011թ-ի ծրագրում: Առաջին փուլում նախատեսվում է կատարել հակասողանքային միջոցառումներ:

- **Հակասողանքային միջոցառումներ Ղազախ-Երևան Dy1000մմ գազատարի վրա:**

Dy1000մմ տրամագծով գազատարը, որը շահագործման է հանձնվել 1979թ-ին, սկսած ԿՄ43-ից անցնում է սողանքային տեղանքով: Բարդ երկրաբանական պայմաններով և շինարարության միջավայրում աղբյուրակապումների (կապտաժների) առկայությամբ պայմանավորված գազատարի վերատեղադրումը անհնարին է: Այդ իսկ պատճառով գազատարի ԿՄ43-ԿՄ47 հատվածում նախատեսվում են ամենամյա հակավողողամաշման (հակաէռոզիոն) և հակասողանքային միջոցառումներ: 2008-2010թթ-ին նույնպես կատարվել են այդպիսի համալիր աշխատանքներ, որոնք թույլ են տվել նվազեցնել սողանքային երևույթների ազդեցությունը գազատարի վրա: Գազատարի տվյալ հատվածի վերականգնման նախագծում նախատեսվում է հարթակի և խրամուղու մաքրում, խողովակաշարի հողագերծում և սահող հենարանների տեղադրում գազատարի տակ (համաձայն գոյություն ունեցող աշխատանքային նախագծի):

- **Ղազախ-Բերդ-Սևան Dy1000մմ գազատարի ամրողականության վերականգնում:**

Dy1000մմ տրամագծով 71 կմ ընդհանուր երկարությամբ գազատարը, կառուցվել է շատ կարճ ժամանակահատվածում և շահագործման է հանձնվել 1990թ-ին: ՀՀ գազատարների ընդհանուր տեխնոլոգիական սխեմայում այն պետք է շահագործվեր որպես լուսինգ: 1993-2003թթ-ին գազատարը կոնսերվացվել էր և հանվել շահագործումից: Սկսած 2004թ-ից, պայմանավորված բնական գազի սպառման ծավալների աճով, այն կրկին գործարկվել է և կատարում է լուսինգի դեր հիմնական Ղազախ-Երևան Dy1000մմ գազանուղի համար, որով իրականացվում է ռուսական բնական գազի մուտքը հանրապետություն: Այդ գազատարի կարևոր դերը և նշանակությունը հատկապես ի հայտ եկան 2008-2009թթ-ի ճմուան պիկային բեռնվածության պայմաններում: Այդ իսկ ժամանակ, խողովակաշարում ճնշման բարձրացման հետևանքով ի հայտ եկան կառուցման թերությունները գազատարի ԿՄ0-ԿՄ40-ում և ԿՄ48-ում հատվածներում: Շինարարության ժամանակ ժայռային գրունտների պայմաններում չեն կատարվել փափուկ գրունտով խողովակաշարի նախապատրաստական շերտի պատրաստման և խողովակաշարի ծածկման աշխատանքները, որի հետևանքով խողովակաշարի մեկուսիչ շերտը լիովին վնասվել էր, իսկ գրունտների կոռոզիոն ակտիվությունը հանգեցրել է խողովակի մետաղի համատարած քայլայմանը և խորշերի առաջացմանը: Ղազախ-Բերդ-Սևան գազատարի շահագործման ընթացքում՝ 2010թ-ին, ի հայտ են եկել վթարային հատվածներ ԿՄ11, ԿՄ38 և ԿՄ48-ում: Հետազննման արդյունքների հիման վրա ընդունվել են տեխնիկական որոշումներ գազատարի ամրողականությունը վերականգնելու և վերոհիշյալ թերությունները վերացնելու ուղղությամբ, հետևյալ եղանակներով՝ մասնակի վերատեղադրում, ուժեղացում ամրանավորված պոլիուրետանային օղագոտիների կիրառմամբ, ինչպես նաև վնասված տեղերի ծածկապատում պոլիմեր-պողպատյա բաղադրությամբ հատուկ մածիկով և այլն:

- Կարմիր Կամուրջ-Ալավերդի-Վանաձոր-Գյումրի-Արմավիր Dy700մմ գազատարի կապիտալ վերանորոգում և վերականգնում:**

Պլանային-կանխարգելիչ աշխատանքների իրականացման ժամանակ, ինչպես նաև հատկապես հանրապետության խոշոր սպառողներին (Հրազդանի ԶԵԿ, ք. Երևան) մատակարարող հիմնական գազատարների վրա վթարների ժամանակ, ոռուսական բնական գազի հիմնական հոսքը անցնում է Ալավերդի-Արմավիր գազատարների համակարգով (արևմտյան ուղղությամբ): Այս համակարգի սկզբնական հատվածներում գազատարը անցնում է չափազանց ակտիվ գրունտներով, որտեղ միայն տեսազննմամբ հայտնաբերվել են բազմաթիվ (տասնյակ) խորշեր և գազի արտահոսքեր: Ընդ որում գազատարների այդ համակարգը չի կարող աշխատել առանց «սեղմված» փականների (հատկապես Ալավերդի-Վանաձոր-Գյումրի հատվածում), քանի որ համակարգում ճնշման գերազանցումը 12մթն.-ից հանգեցնում է գազի կորուստների ավելացմանը: Ստորև բերվում են այդ հատվածները և նրանցում առկա թերությունների տեղամասերը՝

- ✓ Կարմիր Կամուրջ-Ալավերդի ԿՄ 24; 26; 27 և 38; 47-48 (կոռոզիա),
- ✓ Ալավերդի-Վանաձոր ԿՄ 1; 33 և 33.1,
- ✓ Վանաձոր-Գյումրի ԿՄ 42; 45,3; 46 և 47,5,
- ✓ Գյումրի-Արմավիր ԿՄ 6,5; 10; 12 և 12,1:

Բոլոր նշված տեղամասերում 2008-2010թթ.-ին կատարվել են ժամանակավոր միջոցառումներ և տեղադրվել են օդագոտիներ: Անցկացված հետազննման արդյունքների հիմն վրա կատարված տեխնիկական որոշումները նախատեսում են գազատարի մասնակի փոխարինում:

- Ղազախ-Երևան - Արովյանի ԳՄՊԿ Dy500մմ գազատարի վերականգնում:**

Ղազախ-Երևան-Արովյանի ԳՄՊԿ Dy500մմ տրամագծով գազատարը կառուցվել է և շահագործման է հանձնվել 1977թ.-ին, որի հիմնական նպատակն էր մատակարարվող ոռուսական բնական գազի տեղափոխումը ԳՄՊԿ: Սկսած 90-ական թվականների սկզբից գազատարի վրա վերականգնողական աշխատանքներ չեն կատարվել: Ամբողջականության խախտման թերությունները հայտնաբերվել են ԿՄ109÷ԿՄ112 հատվածում: Վերականգնման տեխնոլոգիական անհրաժեշտությունը առաջ եկավ նաև գազի ծավալների պահանջարկի ավելացման անհրաժեշտությամբ՝ Հրազդանի ԶԵԿ-ի կարիքները ապահովելու նպատակով, ինչպես նաև իրանական բնական գազը հյուսիսային ուղղությամբ դեպի ԳՄՊԿ առանձնացված (հիմնական հոսքերից անկախ) տեղափոխելու համար:

- Վարդենիս-Չերմուկ Dy300մմ գազատարի ամրողականության վերականգնում:**

Վարդենիս-Չերմուկ Dy300մմ տրամագծով գազատարը շահագործման է հանձնվել 1977թ.-ին: Գազատարի 48կմ երկարությամբ հատվածը (ԿՄ0÷ԿՄ48) անցնում է ճահճուտ

տեղանքով (ջրածածկ պայմաններում): Պլանային ախտորոշիչ հետազննման աշխատանքների իրականացման ժամանակ ԿՄՀ3-ում 275-300մ երկարությամբ տեղամասում հայտնաբերվել են համատարած խորը կոռոզիայի ենթարկված զգալի քանակությամբ հատվածներ: Հետազննման արդյունքների հիման վրա ընդունվել են տեխնիկական որոշումներ զազատարի ամբողջականությունը վերականգնելու և վերոհիշյալ թերությունները վերացնելու ուղղությամբ, հետևյալ եղանակներով՝ մասնակի վերատեղադրում, ուժեղացում ամրանավորված պոլիուրետանային օղագոտիների կիրառմամբ, ինչպես նաև պոլիմեր-պողպատյա բաղադրությամբ հատուկ մածիկով վնասված տեղերի ծածկապատում և այլն:

**Ստորև (աղյուսակ 1.2.1) բերվում են մայրուղային գազատարների կապիտալ վերանորոգման, փոխարինման և վերատեղադրման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները՝ ըստ համապատասխան աշխատանքների Աղյուսակ 1.2.1**

Մայրուղային գազատարների կապիտալ վերանորոգում, փոխարինում և վերատեղադրում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՀՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)					
			2011թ.		2012թ.		2013թ.	
			քա-նակ	գումար	քա-նակ	գումար	քա-նակ	գումար
1	Երևան - Արմավիր Dy500մմ մայրուղային գազատարի կապիտալ վերանորոգում, վերատեղադրում և փոխարինում	կմ	1,5	175,0	1,5	175,0	1,5	175,0
2	Իլիշևակ - Երևան Dy700մմ և Երևան-Արարատ Dy350մմ գազատարների միջակցման գազատարի Dy500մմ վերականգնում և կապիտալ վերանորոգում	կմ	1,5	175,0				
3	Երևանի Գ.ԲԿ-2-ի Dy700մմ կողմնատար գազատարի վրա հակասողանքային միջոցառումներ և վերատեղադրում սոլանքի տարածքից դուրս	կմ	1,2	300,0				
4	Հակասողանքային միջոցառումներ Ղազախ-Երևան Dy1000մմ գազատարի վրա	կմ			0,1	41,7	0,1	41,7
5	Ղազախ-Բերդ-Սևան Dy1000մմ գազատարի ամրողականության վերականգնում	կմ	0,1	41,7	0,1	41,7	0,1	41,7
6	Կարմիր Կամուրջ-Ալավերդի-Վանաձոր-Գյումրի-Արմավիր Dy700մմ գազատարի կապիտալ վերանորոգում և վերականգնում	կմ	1,0	208,3	1,5	312,5	2,0	416,7
7	Ղազախ-Երևան - Արովյանի Գ.ՍՊԿ Dy500մմ գազատարի վերականգնում	կմ	1,0	116,7				
8	Վարդենիս-Զերմուկ Dy300մմ գազատարի ամրողականության վերականգնում	կմ	0,3	25,0				
<b>Ընդամենը՝</b>				<b>1041.7</b>		<b>570.9</b>		<b>675.1</b>

## 1.2.2. Գազարաշխիչ կայանների (ԳԲԿ) և այլ ինժեներական կառույցների շինարարություն և վերակառուցում:

**Մ**ույն ծրագրով նախատեսվում է մի շարք միջոցառումների իրականացում՝ գազարաշխիչ կայանների և այլ ինժեներական կառույցների կառուցման, արդիականացման և վերակառուցման ուղղությամբ: Անվտանգ, անխափան և և գազամատակարարման նպատակով, ինչպես նաև գազարաշխիչ կայանների և չափիչ հանգույցների անվտանգ շահագործման տեխնոլոգիական պահանջները բավարարելու և արտադրական գործընթացները պարզեցնելու համար նախատեսվում է նոր տեխնոլոգիական հանգույցների հավաքակցում, իին գազարաշխիչ կայանների և չափիչ հանգույցների վերակառուցում և արդիականացում, ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումների (ճնշման կարգավորիչներ, մաքրման զտիչներ, փականներ և այլն) փոխարինում:

Ծրագրում ընդգրկված են հետևյալ միջոցառումները.

- **ԳԲԿ-ների նոր շինարարություն, վերակառուցում և փոխարինում:**

2011թ-ի Ծրագրի տվյալ բաժնում նախատեսված են, ինչպես նոր գազարաշխիչ կայանների տեղակայում, այնպես էլ բարոյապես և ֆիզիկապես մաշված գազարաշխիչ կայանների փոխարինում:

Իրան-Հայաստան մայրուղային գազատարի թողարկումը հնարավորություն կրնանոնի նոր ԳԲԿ-ների շինարարության միջոցով Հանրապետության նախկինում չգազիֆիկացված հարավային մարզերի (Սյունիք, Վայոց Ձոր) գազամատակարարումը ապահովելու համար: Համաձայն մշակված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, նախատեսվում է երեք նոր ԳԲԿ-ների կառուցում՝ երկուսը - յուրաքանչյուրը 3,0 հազ. մ<sup>3</sup>/ժամ արտադրողականությամբ – ք.Սեղրիում և Նորավանք բնակավայրում, երրորդը – 10,0 հազ. մ<sup>3</sup>/ժամ արտադրողականությամբ - Տավուշի մարզի Բաղանիս բնակավայրում՝ հանրապետության սահմանամերձ շրջանների գազամատակարարման համար:

Ծրագրով նախատեսվում է նույնապես գոյություն ունեցող թվով չորս ԳԲԿ-ների վերակառուցում, որով կիրականացվի իին սարքավորումների ամբողջական փոխարինում և տարածքի բարեկարգում (Գավառ, Վարդենիս, Մարալիկ, Թալին):

- **ԳԲԿ-ների և չափիչ հանգույցների մոտեցնող ճանապարհների վերականգնում:**

Որոշ գազարաշխիչ կայանների և չափիչ հանգույցների մոտեցնող ճանապարհների անմիջար վիճակում գտնվելը անհնարին է դարձնում շահագործող ծառայությունների մոտեցումը այդ օրենկություններին: Այդ իսկ պատճառով նախատեսվում է, համաձայն 2009-2010թ-ին կազմված թերության ակտերի, վերականգնել 4 կմ ընդհանուր երկարությամբ մոտեցնող ճանապարհներ:

- **Նոր տեխնոլոգիական սարքավորումների (գտիչներ, փականներ և ճնշման կարգավորիչներ) տեղակայում:**

ԳԲԿ-ի հուսալի և անվտանգ շահագործումը ապահովելու նպատակով, տեխնիկական շահագործման Կանոնների համաձայն, Ծրագրում նախատեսվում են միջոցառումներ գոյություն ունեցող 20 ԳԲԿ-ներում տեխնոլոգիական սարքավորումների փոխարինման և նոր տեխնոլոգիական սարքավորումների՝ նոր սերնդի առանցքային ճնշման կարգավորիչների, ինչպես նաև նոր գտիչների և փականների տեղակայման ուղղությամբ:

- **Գազի մաքրման կայանի շինարարություն:**

Գազի փոխադրման և մատակարարման համակարգերում մայրուղային գազատարների աղտոտման և խցանման հետևանքով Ընկերության առջև ծառացան խնդիրներ կապված հիդրավլիկական պարամետրերի ապահովման հետ: Չափիչ հանգույցների դիաֆրագմաների մեխանիկական խառնուկներով և կաթիլային խոնավությամբ աղտոտման հետևանքով կտրուկ նվազեցին բնական գազի չափման որակը և ճշգրտությունը: Գազափոխադրման համակարգում ծառացած այս խնդիրները փոխանցվեցին նաև գազանատակարարման համակարգ: Վերոհիշյալ խնդիրների լուծման, ինչպես նաև հիդրավլիկական պարամետրերի ապահովման, բնական գազում մեխանիկական խառնուկների և կաթիլային խոնավության քանակի նվազեցման և պահանջվող նորմերին համապատասխանեցման նպատակով, Ծրագրում նախատեսվում է «Կողք» չափիչ հանգույցին կից կառուցել բնական գազի մաքրման կայան, որը հնարավորություն կտա ապահովելու բնական գազի չափման թույլատրելի ճշգրտությունը: Մաքրման հանգույցի նախագծանախաշվային փաստաթղթերը կազմվել են 2008թ-ին:

- **Վարչական շենքերի շինարարություն:**

ԳԾԾ Գորիսի մասնաճյուղը առայսօր տեղակայվում է վարձակալվող շինությունում՝ վարչական շենքի բացակայության պատճառով: Շահագործման աշխատանքների ծավալների ավելացման հետ կապված, ինչը պայմանավորված է Իրան-Հայաստան գազատարի թողարկումով և սպասարկվող գազատարների ընդհանուր երկարության ավելացումով, ծագել է համապատասխան ենթակառուցվածքներով վարչական շենքի կառուցման անհրաժեշտություն, որը և նախատեսվում է Ծրագրով:

- **Օպերատորների տների կապիտալ վերանորոգում:**

ԳԲԿ-ների և տեխնոլոգիական սարքավորումների նորմալ շահագործման, վիճակի պարբերական հսկման, ինչպես նաև սանիտարա-հիգիենիկ նորմերը ապահովելու համար, Ծրագրով նախատեսվում է կապիտալ վերանորոգել և վերակառուցել Զերմուկի, Վայրի և Եղեգնաձորի օպերատորի տները, որոնք գտնվում են վրարային վիճակում: Օպերատորի տների կապիտալ վերանորոգումը անհրաժեշտ է նրանց շահագործման ժամկետը երկարացնելու համար (համաձայն թերության ակտերի):

- ԳԲԿ-ներում հողանցման կոնտուրների վերականգնում:**

ԳԲԿ-ներում հողանցման կոնտուրների ամենամյա պլանային ստուգումների ժամանակ ի հայտ են եկել սարքավորումների շանթապաշտպանության շեղումը թույլատրելի նորմերից: Շանթարգելների և հողանցման կոնտուրների անսարքության կամ բացակայության պայմաններում կայծակների ժամանակ ԳԲԿ-ներում տեղակայված սարքավորումները կարող են շարքից դուրս գալ: Այդ իսկ պատճառով Ծրագրում նախատեսվում են միջոցառումներ շանթարգելների և հողանցման կոնտուրների վերականգնման ուղղությամբ:

**Ստորև (աղյուսակ 1.2.2) բերվում են զազարաշխիչ կայանների և այլ ինժեներական կառույցների շինարարության և վերակառուցման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները՝ ըստ համապատասխան աշխատանքների**

Աղյուսակ 1.2.2

Գազարաշխիչ կայանների և ինժեներական կառույցների շինարարություն և վերակառուցում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ԶՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)				
			2011թ.		2012թ.		2013թ.
			քա-նակ	գումար	քա-նակ	գումար	քա-նակ
1	Նոր ԳԲԿ-ների շինարարություն, վերակառուցում և փոխարինում	հաստ	3	112,5		-	-
2	Հնացած ԳԲԿ-ների վերակառուցում և փոխարինում	հաստ	4	83,3	3	62,5	-
3	ԳԲԿ-ների և չափիչ հանգույցների մոտեցնող ճանապարհների վերականգնում	հաստ	4	20,0	2	10,0	2
4	Նոր տեխնոլոգիական սարքավորումների տեղակայում (գտիչներ, փականներ և ճեղման կարգավորիչներ)	հաստ	20	200,0	20	200	20
5	Գազի մաքրման կայանի շինարարություն	հաստ	1	556,7		-	-
6	Վարչական շենքների շինարարություն	հաստ	1	66,7		-	-
7	Օպերատորների տների կապիտալ վերանորոգում	հաստ	3	20,0	3	20,0	3
8	Տափողակների պատրաստում ԳԲԿ-ների և Զ/Հ-ների համար	հաստ	20	1,0	20	1,0	20
9	Ազարակ ԳԿԿ համար ավտոմատ կառավարման համակարգի մշակում, նախագծում և ներդնում			8,3		-	-
10	ԳԲԿ-ներում հողանցման կոնտուրների վերականգնում	հաստ		20,8		20,8	20,8
<b>Ընդամենը՝</b>				<b>1 089,3</b>		<b>314,3</b>	<b>251,8</b>

1.2.3. Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ:

Համաձայն միջոցառումների տարեկան ծրագրի և ՀՀ Կառավարության Սեանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման և վերարտադրման մասին N876-Ն առ 24.07.2010թ որոշման 2011թ-ին նախատեսվում է ջրի մակարդակը բարձրացնել մինչև ժամանակացույցով նախատեսված նիշը: Վերջինիս պատճառով ջրածածկ կլինեն բազմաթիվ կառույցներ և շինություններ, այդ թվում նաև Ընկերության գազափոխադրման և գազամատակարարման համակարգերի որոշ օբյեկտներ: Ելնելով վերը նշվածից, Ծրագրում նախատեսվում են միջոցառումներ ուղղված գազի համակարգի գազատարների վերատեղադրմանը, ինչպես նաև գազի տնտեսության այլ օբյեկտների տեղահանմանը ջրածածկման գոտուց անվտանգ գոտի, համաձայն շինարարական նորմերի և կանոնների:

*Ստորև (աղյուսակ 1.2.3) բերվում են Անանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված միջոցառումների համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները՝  
բայց համապատասխան աշխատանքների*

Աղյուսակ 1.2.3

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված միջոցառումներ

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ԸՆ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)					
			2011թ.	2012թ.	2013թ.			
			քա-նակ	գումար	քա-նակ	գումար	քա-նակ	գումար
1	Մարտունու ԳԲԿ-ը սնող Dy200մմ կղողնատար-զազատարի կառուցում	հատ	5	145,8		-		-
2	Մարտունու ԳԲԿ-ի շենքի կառուցում	հատ	1	37,5				
3	Սիջին ժնշման Dy250մմ տրամագծով զազատարի կառուցում Մարտունու ԳԲԿ-ից մինչև ք. Մարտունի	հատ	7	125,0		-		-
<b>Ընդամենը՝</b>				<b>308,3</b>		<b>0.0</b>		<b>0.0</b>

#### 1.2.4. Գծային փականների տեղադրում և արդիականացում:

**Գ**ազափոխադրման համակարգի հուսալի աշխատանքը, գազատարների այս կամ այն հատվածներում վթարային անջատումները ապահովելու և գազի փոխադրման ժամանակ ուժիմների փոփոխություններին արագ արձագանքելու նպատակով, սույն Ծրագրում նախատեսվում է գծային փականների և դրանց ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումների փոխարինում և ամրողական վերազինում: Գծային փականների

պահպանման հիմնախնդիրը հանդիսանում է մայրուղային գազատարների օգտագործման պաշարի երկարաձգման ընդհանուր հիմնախնդրի անբաժանելի մասը: Ծրագրում նախատեսված են ստորև բերված գծային փականների մասնակի փոխարինում և վերազինում.

- գծային փական Ղազախ-Երևան Dy700մմ գազատարի վրա (նոր գիծ) ԿՄ0-ում;
- գծային փական Ղազախ-Երևան Dy1000մմ գազատարի վրա (նոր գծի վրա) ԿՄ92-ում և ԿՄ121-ում (աշխատում են միայն կողանցի գծային փականները, հիմնական գծի՝ Dy1000մմ գազատարի, փականը հերմետիկություն չի ապահովում);
- գծային փական ք.Երևանի շուրջը օղակաձև գազատարի և ք.Երևանի գ.ԲԿ-2-ի կողմնատար-գազատարի Dy700մմ միջակցման վրա;
- գծային փական Կողբ-Այրում Dy700մմ գազատարի վրա - ԿՄ0;
- գծային փականներ Dy700մմ և Dy500մմ «Տարոն» ԶՀ-ում;
- փականներ Ղազախ-Բերդ-Սևան գազատարի ԿՄ43-ում փականային հանգույցի շրջանցիկ գծերի վրա (3 հատ Dy300մմ):

**Ստորև (աղյուսակ 1.2.4) բերվում են գծային փականների տեղադրման և արդիականացման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները՝**

#### **ըստ համապատասխան աշխատանքների**

#### **Աղյուսակ 1.2.4**

Գծային փականների տեղադրում և արդիականացում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՀՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)					
			2011թ.		2012թ.		2013թ.	
			քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1	Գծային փականների տեղադրում և արդիականացում	հատ	8	233,3	4	116,7	4	116,7
<b>Ընդամենը՝</b>				<b>233,3</b>		<b>116,7</b>		<b>116,7</b>

#### **1.2.5. Էներգամատակարարման համակարգի վերականգնում:**

**Ժ**երության ակտերի հիման վրա, և Էլեկտրասարքավորումների կառուցման Կանոններին համապատասխան, և սպառողների Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործման Կանոններին համապատասխան Ծրագրում ընդգրկված են վերանորոգման, վերականգնողական և վերակառուցման միջոցառումներ ուղղված գազափոխադրման

համակարգի գործող օբյեկտների անխափան և ապահով էլեկտրամատակարարմանը:

Աշխատանքները նախատեսում են գոյություն ունեցող ԳԲԿ-ների էլեկտրամատակարարման համակարգի վերականգնում:

**Ստորև (աղյուսակ 1.2.5) բերվում են Էներգամատակարարման համակարգի վերականգնման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները՝  
ըստ համապատասխան աշխատանքների**

Աղյուսակ 1.2.5

Էներգամատակարարման համակարգի վերականգնում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)			
			2011թ.	2012թ.	2013թ.	
			քա-նակ	գումար	քա-նակ	գումար
1	ԳԲԿ-ների էլեկտրամատակարարման համակարգի վերականգնում	հատ	6	8,5		7,5
<b>Ընդամենը՝</b>			<b>8,5</b>		<b>7,5</b>	<b>6,5</b>

**1.2.6. Էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների տեղադրում և կապիտալ վերանորոգում:**

Էլեկտրաքիմիական պաշտպանությունը նախատեսված է գազափոխադրման համակարգի ստորգետնյա գազատարները կոռոզիոն քայլայումներից զերծ պահելու և դրանց անվտանգ շահագործումը ապահովելու համար: Էլեկտրաքիմիական պաշտպանությունը իրականացվում է կատոդային և դրենաժային պաշտպանության կայանների միջոցով: Մայրուղային գազատարների շահագործումը առանց ԷջՊԿ-ների, հատկապես ագրեսիվ, թափառող հոսանքներով և ջրահագեցած գրունտներում ու գետանցումներում, հանգեցնում է գազատարների մետաղի քայլայմանը:

Գազափոխադրման համակարգի գազատարների հուսալի շահագործման և կոռոզիայից պաշտպանելու համար տեղակայվող կատոդային պաշտպանության կայանների քանակը նախագծային (նորմատիվային) քանակին հասցնելու նպատակով Ծրագրում նախատեսվում են միջոցառումներ նոր կայանների կառուցման և գոյություն ունեցող կայանների կապիտալ վերանորոգման ուղղությամբ՝ մայրուղային գազատարների տեխնիկական շահագործման Կանոնների պահանջներին, ինչպես նաև ՀՕСТ 9.015-74 և ՀՕСՏ 25812-89 համապատասխան:

**Ստորև (աղյուսակ 1.2.6) բերվում են Էջողությունների տեղադրման և կապիտալի վերանորոգման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները՝  
ըստ համապատասխան աշխատանքների**

Աղյուսակ 1.2.6

Էլեկտրաքիմիական պաշտպանության կայանների տեղադրում և կապիտալ վերանորոգում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ԸՆ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)					
			2011թ.		2012թ.		2013թ.	
			քա- նակ	գումար	քա- նակ	գումար	քա- նակ	գումար
1	Էջողությունների կառուցում	հատ	20	64,0	10	32,0		-
<b>Ընդամենը՝</b>				<b>64,0</b>		<b>32,0</b>		<b>0,0</b>

### 1.2.7. Բնական գազի հաշվառման համակարգի արդիականացում

### 1.2.8. Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում

Հակերության տեխնիկական քաղաքականությունը հաշվառման համակարգի կատարելագործման բնագավառում ուղղորդված է ժամանակակից գերճշգրիտ միկրոպրոցեսորային ծախսաչափիչ համակարգերի օգտագործմանը՝ բազավորված ճնշման փոփոխական անկման ավանդական ծախսաչափերի, ինչպես նաև ոռտացիոն, տուրբինային և կենցաղային մեմբրանային գազի հաշվիչների վրա: Հաշվառման համակարգում ընդգրկված են բոլոր սպառողները առանց բացառության:

Հաշվառման համակարգն ապահովում է բնական գազի ծախսի չափումը և վերահսկումը՝

- ՀՀ իյուսիսային մուտքի վրա (ժամանակակից բազմաֆունկցիոնալ ծախսաչափիչ համալիր “Պիետրո-Ֆիորենտինի” ֆիրմայի արտադրության);
- “Տրանզաք” ՍՊԸ մասնաճյուղերի սահմաններում (ժամանակակից ծախսաչափիչ համալիր “Սուպերֆլոու”, “Արմֆլոու” և “Ֆլորաս”);
- բոլոր գազաբաշխիչ կայաններում (ժամանակակից ծախսաչափիչ համալիր “Սուպերֆլոու”, “Արմֆլոու”, “Ֆլորաս”, տուրբինային ծախսաչափեր հայկական “A2” և ֆրանսիական “Ակտարիս” ընկերությունների էլեկտրոնային ճշտիչներով);
- գազաբաշխիչ ցանցի մուտքագծերի վրա (հակիչ-ծախսաչափիչ համակարգեր);
- գազաբաշխման համակարգի հիմնական ճյուղավորումների վրա;

- գազամատակարարման տարածքային մասնաճյուղերի ծառայությունների սահմանազատման կետերում:

Ելնելով հաշվառման համակարգի կատարելագործման անհրաժեշտությունից, որը հնարավորություն է տալիս բարձրացնել համակարգի աշխատանքի հսկողությունը և տեխնոլոգիական ցուցանիշները, Ծրագրում նախատեսվում է գազափոխադրման համակարգում նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում, տեխնոլոգիական գործընթացների կառավարման ավտոմատ համակարգերի ստեղծում, ինչը հնարավորություն կընձեռնի բարձրացնել համակարգի աշխատանքի հուսալիությունը և նվազեցնել շահագործման ծախսերը:

Նոր տեխնիկայի և արդիական տեխնոլոգիայի ներդրման միջոցառումները ընդգրկում են գործողությունների համակարգ (ձեռք բերում, տեղակայում և հավաքակցում), որոնք ուղղված են հիմնական նպատակների իրականացմանը՝ հաշվառման ցուցանիշների կատարելագործմանը և օպտիմիզացմանը, համապատասխանեցնելով նրանց ոլորտում և ձեռնարկությունում գործող նորմերին և ստանդարտներին: Վերոնշյալ խնդիրները լուծելու նպատակով Ծրագրով նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- միկրոպրոցեսորային ծախսաչափիչ համակարգերի ձեռքբերում;
- գազի արդյունաբերական հաշվիչների, ծախսաչափիչ հանգույցների և այլ սարքավորումների ձեռքբերում և տեղակայում;
- կցաշուրթերի, դիաֆրազմաների և այլ խողովակաշարային ամրանների ձեռք բերում ԶՀ-ների համար;
- շանթապաշտպանիչ բլոկների ձեռքբերում միկրոպրոցեսորային ծախսաչափիչ համակարգերի համար;
- ճնշման և ջերմաստիճանի ստուգաճշտիչների համար օժանդակ սարքավորումների ձեռքբերում;
- ճնշման և ջերմաստիճանի ստուգաճշտիչների ձեռքբերում;
- ծախսաչափիչ համակարգերի համար երկչափ տվյալների և ներսարքված մեկուսատախտակների ձեռքբերում;
- և այլ աշխատանքներ:

**Ստորև (աղյուսակներ 1.2.7 և 1.2.8) բերվում են բնական գազի հաշվառման համակարգի արդիականացման և ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները**

## Աղյուսակ 1.2.7

Բնական գազի հաշվառման համակարգի արդիականացում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)					
			2011թ.		2012թ.		2013թ.	
			քա- նակ	գումար	քա- նակ	գումար	քա- նակ	գումար
1	Սիկրոպրոցեսորային ծախսաչափիչ համակարգերի ձեռքբերում	հատ	10	16,7	25	41,7	25	41,7
2	Չափիչ հանգույցների համար գազի արդյունաբերական հաշվիչների, ծախսաչափիչ և այլ տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերում	հատ	2	1,4	2	1,4	2	1,4
3	Շանթապաշտանիչ բլոկների ձեռքբերում միկրոպրոցեսորային ծախսաչափիչ համակարգերի համար	հատ	10	3,0	35	10,5	25	7,5
<b>Ընդամենը՝</b>				<b>21,1</b>		<b>53,6</b>		<b>50,6</b>

## Աղյուսակ 1.2.8

Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ՉՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)					
			2011թ.		2012թ.		2013թ.	
			քա- նակ	գումար	քա- նակ	գումար	քա- նակ	գումար
1	Ծննդան և ջերմաստիճանի ստուգաճշտիչների համար օժանդակ սարքավորումների ձեռքբերում	հատ	8	6,7	4	3,2	6	4,8
2	Ծննդան և ջերմաստիճանի ստուգաճշտիչների ձեռքբերում	հատ	2	6,7	2	6,7	2	6,7
3	Ծախսաչափիչ համակարգերի համար երկար տվյալների և ներառյալ մեկուսատախտակների ձեռքբերում	հատ	32	8,0	10	2,5	10	2,5
4	Սիկրոպրոցեսորային ծախսաչափերի համար տվյալների ձեռքբերում	հատ			15	12,0	5	4,0
5	Բարձր ճշտության ժամանակակից ծախսաչափերի ձեռքբերում	հատ			5	18,0	5	17,0
6	Հոսքային քրոմատոգրաֆով կահավորված չափիչ հանգույց	հատ			5	50,0	5	50,0
<b>Ընդամենը՝</b>				<b>21,4</b>		<b>92,4</b>		<b>85,0</b>

### 1.2.9. Կապի համակարգի արդիականացում:

**Առաջնային տեղեկատվության ժամանակին հավաքագրման և մշակման, վթարային իրավիճակներում արագ արձագանքման, գազափոխադրման ռեժիմների փոփոխման և տեխնոլոգիական սարքավորումների աշխատանքների վերաբերյալ այդ տեղեկատվության վերահեռարձակման գործընթացները արդյունավետ ապահովելու նպատակով Ծրագրում նախատեսված է իրականացնել Կենտրոնական կարգավարական վարչության համար միացյալ տեղեկատվական միջավայրի ձևավորման աշխատանքները (օպտիկամանրաթելային ճյուղավորված ցանցի կառուցում տեխնոլոգիական պրոցեսների և տվյալներ բազայի դեկավարման միասնական համակարգի ստեղծման համար):**

**Ստորև (աղյուսակ 1.2.10) բերվում են կապի համակարգի արդիականացման համար անհրաժեշտ ներդրումների ծավալագումարային ցուցանիշները**

Աղյուսակ 1.2.10

Կապի համակարգի արդիականացում

№	Աշխատանքների և ծախսերի անվանումը	ԶՄ	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)					
			2011թ.		2012թ.		2013թ.	
			քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1	Հնկերության միասնական տեղեկատվական միջավայրի ստեղծում			35,0		35,0		35,0
	<b>Հնդամենը՝</b>			<b>35,0</b>		<b>35,0</b>		<b>35,0</b>

## 1.2.10. Արովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնում, վերակառուցում և արդիականացում

Հայաստանի Հանրապետություն քնական գաղի անխափան մատակարարման անընդհատության ապահովման հարցում կարևորագույն և առանձնահատուկ դեր է կատարում Արովյանի ԳՍՊԿ-ն, որը հաղիսանում է քնական գաղի միակ աղբյուրը՝ հանրապետություն գաղի ներկրման դադարեցման ժամանակահատվածներում:

Արովյանի ԳՍՊԿ-ն ապահովում է.

- գազասպառման սեզոնային և պիկային անհամաշափությունների կարգավորումը,
- կարևորագույն սպառողների գազամատակարարման հուսալիությունը:

Դժվար է թերագնահատել Արովյանի ԳՍՊԿ-ի դերն ու նշանակությունը Հանրապետության սպառողների հուսալի և անվտանգ գազամատակարարումը ապահովելու գործում:

Վրաստանի տարածքով անցնող միակ մայրուղային գազատարի տեխնիկական անբավարար վիճակը իր մեջ պարունակում է գազատարի և գազափոխադրման համակարգի այլ օրինական լուրջ վթարների հնարավորություն, ինչի հետևանքով կարող է խափանվել գաղի մատակարարումը հանրապետություն:

Հաշվի առնելով ՀՀ կախվածությունը ներկրվող էներգառեսուրսներից, Արովյանի ԳՍՊԿ-ն, հանդիսանում է Էներգետիկ անվտանգության և անկախության իրական երաշխիք: Անհրաժեշտ է նշել, որ Էներգետիկ ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում Արովյանի ԳՍՊԿ-ի նորմալ աշխատանքային վիճակի պահպանումը և միաժամանակ ստորգետնյա պահեստարանում քնական գաղի բավականաչափ ծավալների պահեստավորման համար անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական պայմանների ապահովումը: Արովյանի ԳՍՊԿ-ն Իրան-Հայաստան գազատարի նախագծի հետ համատեղ կարևորագույն տեղ են զբաղեցնում քնական գազով հանրապետության մատակարարման ուղիների դիվերսիֆիկացման ստրատեգիական սխեմայում:

Արովյանի ԳՍՊԿ-ի ընդլայնման և նորմալ աշխատանքային վիճակի պահպանման ուղղությամբ Ծրագրով նախատեսված են հետևյալ աշխատանքները.

- Նոր հորերի շինարարություն, առաջին անգամ Արովյանի ԳՍՊԿ-ի պայմաններում երկու հորերի միաժամանակյա լվացում;
- Նոր կանոնակարգի համաձայն գեղփիզիկական և այլ հետազոտական աշխատանքների շարունակում՝ նոր լվացվող հորերի համար;
- Քնապահպանական համակարգի ներդրում աղաջրապահեստարանի մակերեսից աղային նախագծերի արտահոսքերի տեղայնացման (հատուկ պաշտպանիչ էկրանի պատրաստում) ապահովման համար;
- Նորագույն հեռուստակոմունիկացիոն սարքավորումների վրա հիմնված անվտանգության համակարգի ներդրում, կայանի անվտանգության մակարդակի բարձրացման համար;

5. Գոյություն ունեցող հորերի և հորերը միմյանց կապող տեխնոլոգիական զազատարների (շենքերի) վերակառուցում և այլն:

**Ստորև (աղյուսակ 1.2.11) բերվում են Արովյանի ԳՄՊԿ-ի հուսալի և անվտանգ շահագործման համար անհրաժեշտ աշխատանքների ցանկը և ներդրումների ծավալագումարային ցուցանիշները:**

Աղյուսակ 1.2.11

Արովյանի ԳՄՊԿ-ի ընդլայնում, վերակառուցում և արդիականացում

№	Միջոցառումների անվանումը	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)		
		2011թ	2012թ	2013թ
1	№ 25Γ հորի գետֆիզիկական համալիր հետազննում և ճնշափորձարկում	30,0	-	-
2	Հորերի շինարարություն և լվացում՝	-	-	-
	հոր № 24Γ ( $V_{\text{ազ}} = 150 \text{ հազ. մ}^3$ ; $V_{2010} = 30 \text{ հազ. մ}^3$ )	80,0	80,0	80,0
	հոր № 25Γ ( $V_{\text{ազ}} = 150 \text{ հազ. մ}^3$ ; $V_{2010} = 0 \text{ հազ. մ}^3$ )	60,0	80,0	80,0
3	Հորերի ձայնային տեղորշում՝	-	-	-
	հոր № 24Γ	6,9	7,0	7,0
	հոր № 25Γ	14,0	7,0	7,0
4	Ճնշակայանի ջրաղի տեղում մաքրման կառույցների շինարարություն	50,0	-	-
5	Առաջին աղաջրապահեստարանի էկոլոգիական պաշտպանություն (պաշտպանիչ էկրան)	20,0	-	-
6	Ծրջապահ խողովակների ձեռքբերում $d=219\text{մմ}$ և $d=114\text{մմ}$ , № 24Γ հորի համար	80,0	-	80,0
7	ԳՄՊԿ-ի անվտանգության համակարգի ներդրում	130,0	45,0	
8	Ֆոնտանային արմատուրների ձեռքբերում (№ 4Γ հոր)	25,0	25,0	25,0
9	№ 8Γ հորի համալիր գետֆիզիկական հետազոտում (№№ 8, 11, 19 հորեր)	0	0	0
10	Ֆոնտանային արմատուրների վերակառուցում	1,2	-	-
11	Գազատարների մեկուսիչ շերտի փոխարինում	18,8	-	-
12	Գազատարների վնասված հատվածների վերակառուցում	3,3	-	-
13	Գազատարների բացված հատվածների հողածածկում	0,4	-	-
14	Աղաջրատարի կառուցում № 23Γ հորի հիդրոկտրադրում ապահովելու համար	-	10,0	-
15	D=159մմ աղաջրատարի և ջրագծի կառուցում	-	6,0	-
16	№ 4, 5, 8 հորերի ֆոնտանային արմատուրների փոխարինում	-	5,0	10,0
17	№ 4, 5, 8 հորերի իջեցման-բարձրացման աշխատանքներ և լվացում	-	26,0	58,0
18	№ 6, 9 հորերի վերակառուցման աշխատանքներ և լվացում	-	20,0	20,0
19	Պոմպակայանից № 5Γ հոր գործող ջրատարի ախտորոշում և վերակառուցում	-	30,0	-
	<b>Ընդամենը՝</b>	<b>519,6</b>	<b>341,0</b>	<b>367,0</b>

## ԲԱԺԻՆ 2

Գազարաշխման համակարգ

## Բաժին 2. Գաղաքաշխման համակարգ (ԳԲՀ)

### 2.1. Ներդրումային ծրագրով նախատեսվող միջոցառումներ

Անխափան և հուսալի գաղաքատակարարության ապահովելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով գաղաքաշխման համակարգի նորմատիվային ցուցանիշները և վթարավերականգնողական աշխատանքները, Ծրագրում նախատեսված են հետևյալ միջոցառումներ՝

1. Գաղաքաշխիչ ցանցի շինարարություն (ընդլայնում) և բնական գազի կենցաղային հաշվիների տեղադրում
2. Գաղաքաշխման համակարգի վերականգնում, փոխարինում և վերատեղադրում
3. Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ
4. Հաշվառման համակարգի արդիականացում
5. Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում
6. ԷջԴ կայանների տեղադրում և կապիտալ վերանորոգում
7. Էներգամատակարարման համակարգի վերականգնում և արդիականացում
8. Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում
9. Կարգավարական, վթարա-վերականգնողական ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության օբյեկտների համար սարքավորումների ձեռքբերում:

### 2.2. Ներդրումային ծրագրով նախատեսվող ներդրումներ

Առյան ենթարաժնում ներկայացվում են 2011-2013թթ. ընթացքում գաղաքաշխման համակարգում նախատեսվող ներդրումները: 2011-2013թթ.-ին կատարվելիք աշխատանքների ծավալագումարային ամփոփ ներկայացված է աղյուսակ 2-ում:

Միջոցառումները մշակելիս կիրառվել է տեղայնացված մոտեցում, իիմք են ընդունվել տեղերում կատարված հետազոտման և ախտորոշման արդյունքները ու դրանց հիման վրա կազմված թերությունների ակտերը:

Ենթարաժիններում ներկայացված են 2011-2013թթ.-ի նախատեսվող աշխատանքների ծավալագումարային տվյալները և 2011 թվականի ընթացքում կատարվելիք աշխատանքների մանրամասն նկարագրությունը:

## Աղյուսակ 2

## Գազարաշխման համակարգում նախատեսվող ներդրումները

№	Միջոցառումների աճվանումը	Ներդրումների ծավալը ըստ տարիների (մլն. դրամ)		
		2011թ	2012թ	2013թ
2.1	Գազարաշխիչ ցանցի շինարարություն (ընդլայնում)	250.0		
2.2	Բնական գազի կենցաղային հաշվիչների և արկղերի ձեռքբերում և տեղադրում	431.3	200.0	145.0
2.3	Գազարաշխման համակարգի վերականգնում, փոխարինում և վերատեղադրում	750.0	750.0	750.0
2.4	Միջոցառումներ՝ կապված Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ	185.0		
2.5	Հաշվառման համակարգի արդիականացում	158.4	111.3	106.6
2.6	Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում	3121.3	269.0	199.0
2.7	Էջու կայանների տեղադրում և կապիտալ վերանորոգում	94.5	135.0	162.0
2.8	Էներգամատակարարման համակարգի վերականգնում և արդիականացում	54.9	54.0	22.1
2.9	Ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների ձեռքբերում	68.1	90.7	149.1
2.10	Շենքերի, շինությունների կառուցում, ընդլայնում և ձեռքբերում	0.0	25.0	25.0
2.11	Կարգավարական, վթարային ծառայությունների և ՔՊ օբյեկտների համար սարքավորումների ձեռքբերում	35.3	20.0	6.8
	Ընդամենը՝	5148.8	1655.0	1565.6

